# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 27 | Նոյեմբեր | 2018 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 27 | Նոյեմբեր | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 0202269863 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 6 3 6 7 8 1 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | Արդշինբանկ; N 2470103343210000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը թվով | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | թիվ 11167617 քր գործով լրացուցիչ դատահաշվապահական փորձաքննություն | հատ | 1 | 10000 | | 10000 |
| Ընդամենը | | | | | | 10000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

27/11/2018 20:31:55

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Լրացուցիչ դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

21.11.2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս. Հ. Բեսալյանս քննարկելով վարույթի թիվ 11167617 գործի նյութերը և այդ քրեական գործով 02.08.2017 թվականին դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին կայացված որոշմամբ առաջադրված հարցերի շրջանակներում <<ԱՎ ԷՔՍՊԵՐՏ>> ՍՊ ընկերության տնօրեն և սույն քրեական գործով փորձագետ ճանաչված Ն. Գրիգորյանի կողմից 03.11.2018 թվականին տրված եզրակացությունը

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

17.04.2017թ. Սվետլաննա Սարատիկյանը և 18.04.2017թ. Արմենուհի Ավետիսյանը՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնում հաղորդումներ են տվել, որ աշխատելով Բագրատունյաց պողոտա 1 հասցեում գործող «Երևան» բժշկական կենտրոնում՝ չեն ստացել իրենց հասանելիք աշխատավարձի արձակուրդային գումարները, որը յուրացրել է նշված բժշկական կենտրոնի նախկին գլխավոր հաշվապահ Վարդուհի Սերգեյի Սոֆյանը: Նույն օրը ստացվել է «Երևան» բժշկական կենտրոնի 31 աշխատակիցների միասնական դիմումը՝ ընկերության ղեկավարության կողմից իրենց արձակուրդային գումարները և աշխատավարձներ չվճարելու և յուրացնելու վերաբերյալ: Նշված հաղորդումների արժանահավատությունը պարզելու նպատակով թիվ 11167617 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին 02.08.2017 թվականին կայացված որոշմամբ փորձագետներին առաջադրված հարցերի ցանկում ներառվել են նաև ստորև բերված հարցերը՝

Երևան բժշկական կենտրոնում 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 201 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության աշխատակիցների անվամբ հաշվարկված և ըստ պատկանելիության վճարված աշխատավարձի չափը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից բխու՞մ արդյոք թիվ 11167617 քրեական գործով կատարված նախաքննության տվյալների ինչպես նաև ընկերությունում պահպանվող անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից, նախաքննության ընթացքում նշանակված դատահամակարգչային փորձաքննությամբ վերծանված տվյալներից

ընկերության հարկային գործում գտնվող հարկերի և պարտադիր վճարների հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված տվյալներից թե՞ ոչ, եթե ոչ ապա տարբերությունը որքա՞ն է կազմում, և այդ տարբերությունը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ի՞նչ եղանակով է տնօրինվել:

Երևան բժշկական կենտրոնում 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության աշխատակիցների անվամբ հաշվարկված և ըստ պատկանելիության վճարված արձակուրդային գումարների չափը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից բխու՞մ է արդյոք թիվ 11167617 քրեական գործով կատարված նախաքննության տվյալներից, ինչպես նաև ընկերությունում պահպանվող անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից, նախաքննության ընթացքում նշանակված դատահամակարգչային փորձաքննությամբ վերծանված տվյալներից և ընկերության հարկային գործում գտնվող հարկերի և պարտադիր վճարների հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված տվյալներից թե՞ ոչ, եթե ոչ ապա տարբերությունը որքա՞ն է կազմում, և այդ տարբերությունը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ի՞նչ եղանակով է տնօրինվել:

Վերոհիշյալ հարցերի շրջանակներում սկզբնական դատահաշվապահական փորձաքննությամբ իրականացված հետազոտման արդյունքներից և դրա հիման վրա տրված հետևություններից երևում է, որ <<Լեբեն>> ՍՊԸ Երևան ԲԿ-ի անեսթեզիստ Արմենուհի Ռազմիկի Ավետիսյանի և բժիշկ ռևմատոլոգ Ռուզաննա Հարությունի Հարությունյանի․ անվամբ հետազոտվող ժամանակաշրջանի կտրվածքով աշխատավարձի և արձակուրդայինի գումարների հաշվարկման արժանահավատությունը վերլուծության չեն ենթարկվել:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ սույն քրեական գործով պարզելու համար, թե հետազոտվող ժամանակաշրջանի կտրվածքով Ռուզաննա Հարությունի Հարությունյանի և Արմենուհի Ռազմիկի Ավետիսյանի անվամբ հաշվարկված և ըստ պատկանելիության վճարված աշխատավարձի և արձակուրդայինի չափը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից բխում է, արդյոք թիվ 11167617 քրեական գործով կատարված նախաքննությամբ ձեռք բերված տվյալներից, ինչպես նաև ընկերությունում պահպանվող անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից, նախաքննության ընթացքում նշանակված դատահամակարգչային փորձաքննությամբ վերծանված տվյալներից և ընկերության հարկային գործում գտնվող հարկերի և պարտադիր վճարների հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված

տվյալներից, թե ոչ, եթե ոչ, ապա տարբերությունը որքան է կազմում և այդ տարբերությունը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ինչ եղանակով է տնօրինվել և բացի այդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հարցի պարզաբանման համար անհրաժեշտ են հաշվապահության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 243-244-րդ և 248-րդ հոդվածների ու 251-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից.

## ՈՐՈՇԵՑԻ

Սույն քրեական գործով նշանակել լրացուցիչ դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<ԱՎ ԷՔՍՊԵՐՏ>> ՍՊ ընկերության տնօրեն և սույն քրեական գործով քննիչի կողմից կայացված որոշմամբ փորձագետ ճանաչված Ն. Գրիգորյանին:

Փորձագետին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին և առաջադրել ներքոհիշյալ հարցը՝

1. Երևան բժշկական կենտրոնում 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերն ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության աշխատակիցներ Արմենուհի Ռազմիկի Ավետիսյանի և Ռուզաննա Հարությունի Հարությունյանի անվամբ հաշվարկված և ըստ պատկանելիության վճարված աշխատավարձի և արձակուրդայինի չափը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից բխում է արդյոք թիվ 11167617 քրեական գործով կատարված նախաքննության տվյալներից, ինչպես նաև ընկերությունում պահպանվող անալիտիկ և սինթետիկ հաշվառման փաստաթղթերում արտացոլված տվյալներից, նախաքննության ընթացքում նշանակված դատահամակարգչային փորձաքննությամբ վերծանված տվյալներից և ընկերության հարկային գործում գտնվող հարկերի և պարտադիր վճարների հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված տվյալներից, թե ոչ, եթե ոչ, ապա տարբերությունը որքան է կազմում և այդ տարբերությունը զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ինչ եղանակով է տնօրինվել:

2. Նկատի ունենալով, որ առաջադրված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ հետազոտման ենթակա փաստաթղթերն, ինչպես նաև թիվ 11167617 քրեական գործի հատորները գտնվում են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի

քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում և տվյալ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, ուստի քրեական գործի նախաքննության ընթացքում չխոչընդոտելու համար խնդրվում է լրացուցիչ փորձաքննությունը իրականացնել Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում, որտեղ քննիչի կողմից կապահովվի անհրաժեշտ աշխատանքային պայմաններ և փորձագետին կտրամադրվի հետազոտման ենթակա պահանջվող փաստաթղթերը և նախաքննությամբ ձեռք բերված տվյալները:

Քննիչ՝ Ս. Հ. Բեսալյան